Մանավանդ որ՝ ավարտելով ճյուղավորումները՝ Դավրիժեցին վերադառնում է բուն պատմությանը՝ չմոռանալով այդ մասին հիշեցնել նաև իր ընթերցողին: Այդ կերպ՝ պատմիչն ապահովում է իր պատմագրքի համակարգվածությունն ու ժամանակագրությունը: Ինչպես՝ «Դարձեալ դարձցուք ի սկիզբն պատմութեանս մերոյ» (էջ 82), «Դարձեալ՝ դարձցուք ի յոճ նախկին պատմութեան մերոյ, ի բանն, զոր հասուցաք զՋղալօղլին ի Նախչուան, և զշահն տարաք ի Թարվէզ» (էջ 88), «Եւ արդ յետ այսց ամենից զոր պատմեցաք...» (էջ 89), «Վասն զի որպէս պատմեցաք ի նախկին ճառին՝ թէ կարգեաց շահն ի զօրացն Պարսից...» (էջ 89), «...զՀանիս Թահմազղուլի բէկն, որոյ վասն յառաջագոյն պատմեցաք, թէ...» (էջ 89), «Ի վեր անդր ի կարգի պատմութեան, զոր գրեցաք վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, թէ հնաց նա յաշխարհն Իլախաց: Արդէ յորժամ եհաս նա անդր...» (էջ 293) և այլն: Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից՝ այս դեպքում ևս առկա են որոշակի տեքստային կաղապարներ: